ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 նոյեմբերի 2015 թվականի թիվ 209 - Ա

## ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ «ԱՉԱՌՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 203-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1/ կետով, և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.9 կետի «է» ենթակետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը Կորյուն Վարդապետյանին 2015 թվականի նոյեմբերի 27-ից նշանակել «Աչաջրի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

2. 2015 թվականի նոյեմբերի 27-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 21-ի «Աչաջրի առողջության կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի պարտականությունները Կորյուն Վարդապետյանի վրա դնելու մասին» թիվ 203-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. նոյեմբերի 26
ք.Իջևան